ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՈՒՂՂԻՉ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

1967թ. արաբա-իսրայելյան պատերազմից հետո Սիրիան հայտնվել էր բավական ծանր ներքաղաքական և սոցիալ-տնտեսական դրության մեջ: 1967թ. «վեցօրյա» պատերազմում կրած պարտության պատճառով սիրիական բանակը խորը բարոյական և հոգեբանական ճգնաժամ էր ապրում: 1966թ. փետրվարի 23-ին Սիրիայում իշխանության եկած ձախբաասականները գրեթե ուշադրություն չէին դարձնում պետության պաշտպանունակության ամրապնդման և բանակի վրա: Սիրիայում անմխիթար էր նաև սոցիալ-տնտեսական իրավիճակը: Երկրում կառավարող Բաաս[1] կուսակցությունում իրար դեմ պայքարում էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ տարբեր սկզբունքներ և մոտեցումներ դավանող երկու խմբակցություններ՝ քաղաքացիական, որը գլխավորում էր Բաաս կուսակցության սիրիական մասնաճյուղի գլխավոր քարտուղար Սալահ Ջադիդը և զինվորական, որի ղեկավարն էր պաշտպանության նախարար գեներալ Հաֆեզ ալ-Ասադը[2]: Նա քննադատում էր ձախբաասականների ներքին և արտաքին, ինչպես նաև սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, իսկ 1967թ. պատերազմում Սիրիայի կրած պարտությունը պատճառաբանում էր ձախբաասականների ոչ ճիշտ քաղաքականությամբ: Այս պայմաններում 1970թ. հոկտեմբերի 30-ին իր աշխատանքն սկսեց Բաասի Սիրիայի երկրամասային 10-րդ արտահերթ համագումարը: Համագումարն ընդունեց բազմաթիվ որոշումներ, որոնցից մեկով զբաղեցված պաշտոններից հեռացվում էին պաշտպանության նախարար Հաֆեզ ալ-Ասադը և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Մուստաֆա Տլասը: Համագումարը հայտարարեց նաև, որ դեմ է արաբա-իսրայելյան ճգնաժամի որևէ քաղաքական կարգավորման և կոչ արեց ժողովրդաազատագրական պատերազմի Իսրայելի դեմ: Ընդհանրապես ձախբաասականները և հատկապես նրանց կարկառուն ներկայացուցիչներ վարչապետ Յուսեֆ Զուեյնը և արտաքին գործերի նախարար Իբրահիմ Մախուսը գտնում էին, որ Իսրայելի

դեմ հնարավոր է հաջող պայքարել միայն ժողովրդաազատագրական պատերազմի միջոցով՞:

Նման պայմաններում երկիրը քաղաքական և տնտեսական ճիշտ ուղու վրա դնելու և իր հակաճգնաժամային ծրագրերն իրականացնելու համար Ասադին ոչինչ չէր մնում անելու, քան իշխանությունը Սիրիայում կենտրոնացնելու իր ձեռքում:

1970թ. նոյեմբերի 13-ին Սիրիայի պաշտպանության նախարար գեներալ Հաֆեզ ալ-Ասադի գլխավորությամբ իրականացված միջոցառումների հետևանքով Սիրիայում իշխանությունն անցավ զինվորական խմբակցությանը: Սիրիական բանակը զբաղեցրեց ռադիոկայանը և հեռուստաընկերությունը, ինչպես նաև «ալ-Բաաս» և «աս-Սաուրա» պաշտոնական թերթերի խմբագրությունները: Ասադը նախկինում բազմաթիվ սպաների տեղափոխություններ էր անցկացրել բանակում՝ բոլոր զորամասերը դնելով իր ուղղակի հսկողության տակ[4]: Նույն օրը ձերբակալվեցին և «Մեզզեի» բանտում բանտարկվեցին Սիրիայի նախագահ Նուր ադ-Դին ալ-Աթասին և Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության (ԱՍՎԿ կամ Բաաս) սիրիական մասնաճյուղի գլխավոր քարտուղար Մալահ Ջադիդը, իսկ արտաքին գործերի նախարար Իբրահիմ Մախուսը փախավ Ալժիր[5]: Նոյեմբերի 15-ին ստեղծվեց Բաաս կուսակցության ժամանակավոր երկրամասային ղեկավարությունը: Վերջինս նոյեմբերի 16-ին հայտարարությամբ դիմեց բնակչությանը, որտեղ շարադրվում էր Սիրիայի ղեկավարության գործունեության ծրագիրը ներքին և արտաքին քաղաքականության մասին[6]: Հայտարարության մեջ նշվում էր, որ «նոյեմբերի 16-ի շարժումը» կոչված էր ուղղելու ԱՍՎԿ-ի սիրիական մասնաճյուղի նախորդ ղեկավարության սխալները և կուսակցության առջև կանգնած խնդիրները լուծել նրա համագումարների որոշումները կյանքի կոչելով: Այստեղից էլ ծնունդ առավ «ուղղիչ շարժում» անունը (արաբերեն «ալ-հառաքա աթ-թասհիհիյա»):

Թեև Սիրիայում տեղի ունեցավ իշխանափոխություն, այնուամենայնիվ, ուղղիչ շարժման սկզբնավորմամբ Բաաս կուսակցությունը պահպանեց իր կարգավիճակը՝ որպես իշխանության կուսակցություն, կամ նոր իշխանության գաղափարական հենարան: 1963թ. մարտի 8-ի հեղափոխության ժամանակ, երբ Բաաս կուսակցությունը եկավ իշխանության գլուխ Սիրիայում, Ասադը հինգ հոգուց բաղկացած ընդհատակյա ռազմական կոմիտեի գլխավոր առաջնորդներից մեկն էր, որը ղեկավարեց հեղափոխությունը[7]: Նա պարզապես գտնում էր, որ ձախբաասականները շեղվել էին կուսակցության հիմնական սկզբունքներից և ծրագրային դրույթներից և վարում էին ոչ ճիշտ ներքին և արտաքին քաղաքականություն:

1971թ. մարտի 12-ին համաժողովրդական գաղտնի քվեարկությամբ, պաշտոնական տվյալների համաձայն ստանալով ձայների 99,9 տոկոսը, Հաֆեզ ալ-Ասադը յոթ տարի ժամկետով ընտրվեց Սիրիայի նախագահ, իսկ ապրիլի 3-ին կազմավորվեց նոր կառավարություն՝ Աբդ առ-Ռահման ալ-Խլեյֆաուիի գլխավորությամբ[8]: 1971թ. մայիսին գումարվեց Բաասի 5-րդ երկրամասային համագումարը, որը ուղղիչ շարժման սկսվելուց հետո կուսակցության առաջին համագումարն էր[9]: Բաասի սիրիական մասնաճյուղի գլխավոր քարտուղար ընտրվեց Հաֆեզ ալ-Ասադը,[10] իսկ ներքին քաղաքական ասպարեզում համագումարը հաստատեց Ազգային առաջադիմական ճակատ ստեղծելու իր մտադրությունը, ինչը մերժվում էր նախկին ձախբաասական ղեկավարության կողմից:

1972թ. Սիրիայի ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցած ամենանշանակալից իրադարձությունը երկրի ազդեցիկ տարբեր կազմակերպություններն ու կուսակցությունները միավորող Ազգային առաջադիմական ճակատի (ԱԱՃ) ստեղծումն էր, որի անհրաժեշտության մասին նշված էր «նոյեմբերի 16-ի» ուղղիչ շարժման ծրագրում: Սիրիայի առաջադիմական ուժեր համարվող կազմակերպությունները՝ Արաբական սոցիալիստական միությունը, Սիրիայի կոմունիստական կուսակցությունը, Արաբական սոցիալիստական յունիոնիստական շարժումը, Արաբական սոցիալիստների շարժումը Բաաս կուսակցության գլխավորությամբ 1972թ. մարտի 7-ին պաշտոնապես հայտարարեցին Սիրիայի Ազգային առաջադիմական ճակատի ստեղծման մասին[11]: Ազգային առաջադիմական ճակատի կանոնադրությունը ստորագրեցին Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար Հաֆեզ ալ-Ասադը, Բաաս կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալ Աբդ Ալլահ ալ-Ահմարը, Սիրիայի վարչապետ գիներալ-մայոր Աբդ առ-Ռահման ալ-Խլեյֆաուին, Արաբական սոցիալիստական միության գլխավոր քարտուղար դոկտոր Ջամիլ ալ-Աթասին, Սիրիայի արդարադատության նախարար դոկտոր Աղիբ ան-Նահավին, Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բեկդաշը, Սիրիայի պետական նախարար և կոմկուսի քաղբյուրոյի անդամ Յուսեֆ Ֆեյսալը, սոցիալիստ-յունիոնիստների անունից սիրիական կառավարության անդամներ Ֆաիզ Իսմայիլը և Մուստաֆա Հալլաջը և Արաբական սոցիալիստական շարժման անունից Աբդ ալ-Ղանի Կաննուտը[12]:

Ճակատի կենտրոնական ղեկավարության 17 անդամներից 9-ը Բաասից էին, իսկ 8-ը՝ մյուս կուսակցություններից: ԱԱՃ-ի նախագահ դարձավ Սիրիայի Արաբական Հանրապետության (ՍԱՀ) նախագահ, Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար Հաֆեզ ալ-Ասադը[13]: Մարտի 9-ին հրապարակվեցին ճակատի հիմնական փաստաթղթերը՝ խարտիան և կանոնադրությունը: Խարտիայում նշվում էր Բաասի և ԱԱՃ-ի

գաղափարական ուղղվածության, քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում նախատեսվող ծրագրերի, ինչպես նաև համաարաբական խնդիրների մասին: Գլխավոր նպատակ էր համարվում 1967թ. Իսրայելի կողմից գրավված արաբական տարածքների ազատագրումը: Խարտիայում ընդգծվում էր Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության (ՊԱԿ) վճռական և բազմակողմանի օժանդակության անհրաժեշտության մասին՝ որպես արաբական ազգային-ազատագրական շարժման ամենագլխավոր կազմակերպություն, իսկ արաբական պետությունների հետ հարաբերությունների մակարդակն ու համագործակցությունը պետք է որոշվեր ելնելով այն հանգամանքից, թե ինչ ներդրում ունի այդ երկիրը Պաղեստինի ազատագրության համար մղված պայքարում և պաղեստինյան հիմնահարցի լուծման գործում[14]: Հարկ է նշել, որ ԱՄՎԿ-ն ընդհանրապես միջարաբական հարաբերությունների զարգացումը ուղղակիորեն կապում էր Պաղեստինի ազատագրության և արաբական բոլոր գրավյալ տարածքների վերադարձման հետ, քանի որ արաբական երկրները միակարծիք չէին Պաղեստինի խնդրի և ընդհանրապես մերձավորարևելյան հակամարտության կարգավորման մեթոդների և միջոցների ընտրության մեջ: Հաստատելով Բաաս կուսակցության ռազմավարական գծի ժառանգականությունը մերձավորարևելյան հակամարտության մեջ, սիրիական նոր ղեկավարությունը՝ Ասադի գլխավորությամբ, հաստատում էր, որ նրա գործունեությունը ենթարկված կլինի միակ գլխավոր նպատակի՝ այնպիսի ուժեղ պետականության և հասարակության ստեղծմանը, որը ընդունակ կլինի հասնել Իսրայելի կողմից օկուպացված արաբական տարածքների ազատագրմանը և պաղեստինյան խնդրի լուծմանը: Չնայած այն հանգամանքին, որ սկզբնական շրջանում Ասադը նույնպես չէր ընդունում 1967թ. արաբա-իսրայելյան պատերազմից հետո՝ 1967թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած թիվ 242 բանաձևը, այնուամենայնիվ հարկ է նշել, որ Սիրիայի մերձավորարևելյան և ընդհանրապես միջարաբական քաղաքականությունը 70-ական թթ. ընթացքում ձեռք բերեց ճկունություն, աստիճանաբար ընդունվեց փոխզիջումային քաղաքականությունը, սկսեցին ի հայտ գալ գործնական և իրատեսական բնույթ կրող մոտեցումների տարրեր:

Անհրաժեշտ է նաև նշել, որ խարտիայով որոշ չափով սահմանափակվում էին ճակատի մեջ ներգրավված ոչ բաասական ուժերի գործունեության շրջանակները, որոնք պարտավորվում էին ճակատից դուրս չստեղծել որևէ խմբավորումներ և չվարել կուսակցական-գաղափարական և քարոզչական գործունեություն ո՛չ երիտասարդության, ո՛չ բանակային շրջաններում, ինչպես նաև դադարեցնել ուսանողների անդամագրումը իրենց կազմակերպություններում[15]:

ԱԱՃ-ի հիմնական մարմինը կենտրոնական ղեկավարությունն էր, ճակատն ուներ նաև կառուցվածքային մասնաճյուղեր երկրի բոլոր մուհաֆազաներում, այսինքն՝ մարզերում[16]: Կենտրոնական ղեկավարությունն իրականացնելու էր հետևյալ գործառույթները. կազմակերպելու էր խարտիայի իրագործումը, մշակելու էր ԱԱՃ-ի գործունեության ծրագիրը, սահմանելու էր ճակատի մասնաճյուղերի ղեկավարության կազմը: Առաջադիմական ճակատի նախագահն ինքն էր հրավիրելու կենտրոնական ղեկավարության նիստերը, և նա էր իրականացնելու ընդունված որոշումների, ինչպես նաև խարտիայի և կանոնադրության դրույթների իրագործման հսկողությունը: Կենտրոնական ղեկավարությունը պարբերաբար խորհրդակցություններ էր անցկացնելու ամիսը երկու անգամ, իսկ նախագահի առաջարկությամբ կարող էր գումարել արտահերթ նիստ: Կենտրոնական ղեկավարության նիստերը փակ էին լինելու, բացառությամբ հատուկ դեպքերի, իսկ որոշումներն ընդունվելու էին ձայների մեծամասնությամբ[17]: Ինչպես վերը նշվել էր, կենտրոնական ղեկավարության տասնյոթ անդամներից ինը բաասականներ էին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ, կարող ենք եզրակացնել, որ Բաասը, ըստ իր կամքի և հայեցողության, կարող էր անցկացնել ցանկացած որոշում, առանց հաշվի առնելու ճակատում ներկայացված մյուս կուսակցությունների կարծիքն ու դիրքորոշումը:

Առաջադիմական ճակատի կանոնադրության 5-րդ հոդվածը սահմանում էր, որ «ճակատի մասնակիցները իրականացնում են ընդհանուր քաղաքական գործունեություն ճակատի շրջանակներում: Ճակատը իրավունք ունի հրատարակել իր թերթը, շրջաբերականներ և այլ տպագիր հրատարակություններ: Ճակատի մասնակիցները օգտվում են իրենց կազմակերպությունների շրջանակներում ազատ գործելու իրավունքից», սակայն 4-րդ հոդվածը սահմանում էր, որ «Սիրիայի Արաբական Հանրապետությունում պաշտոնական որոշումներ են համարվում ԱԱՃ-ի և Բաասի որոշումները»[18]: Փաստորեն ճանաչելով Սիրիայում մի քանի քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների գոյությունը, ԱԱՃ-ի կանոնադրությունն սահմանափակում էր նրանց ինքնուրույն գործունեության իրավունքը:

Ազգային առաջադիմական ճակատը ներկայացված էր ինչպես Սիրիայի Ժողովրդական ժողովում (պառլամենտ), այնպես էլ կառավարությունում[19]: 1972թ. մարտի 23-ին կազմավորված «ազգային միասնության» նոր կառավարությունում իրենց անդամներն ունեին ԱԱՃ-ի բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները:

1973թ. մայիսի 25-ին վերջին տասնմեկ տարում առաջին անգամ Սիրիայում տեղի ունեցան Ժողովրդական ժողովի ընտրություններ[20]: Առա-

ջաղիմական ճակատը հաղթանակ տարավ՝ ընտրություններին մասնակցելով միասնական ցուցակով:

ԱԱճ-ի ստեղծումը հնարավորություն տվեց Ասադին ավելի վստահ իրագործել իր քաղաքական ծրագիրը, քանի որ նրա մասնակիցները պետք է իրականացնեին Բաասի հավանությանն արժանացած ընդհանուր քաղաքականությունը, իսկ երկիրը ձեռք բերեց ներքաղաքական կայունություն, ինչն անհրաժեշտ նախապայման էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ասադի նպատակը Սիրիայում ստեղծել միասնական քաղաքական կազմակերպություն, որը նրա գլխավորությամբ երկրում պաշտոնական որոշումներ ընդունելու մենաշնորհ կստանար, հաջողվեց:

Չնայած այն հանգամանքին, որ անդամագրվելով ԱԱճ-ին և ստորագրելով նրա կանոնադրությունը վերոնշյալ չորս կուսակցություններն ու կազմակերպությունները որոշ չափով զրկվեցին Սիրիայի ներքին քաղաքական ասպարեզում ամբողջապես ինքնուրույն գործելու հնարավորությունից, սակայն փոխարենը, նրանք իրենց ներկայությունն ապահովեցին և՛ ժողովրդական ժողովում, և՛ կառավարությունում:

Փաստորեն Հաֆեզ ալ-Ասադը քաղաքակիրթ և օրինական ճանապարհով նպաստավոր պայմաններ ստեղծեց Սիրիայում ամբողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար: Հիմնադրելով Ազգային առաջադիմական ճակատը, դառնալով նրա նախագահը և երկրում օրինականորեն գործող քաղաքական բոլոր կազմակերպությունները դնելով իր ուղղակի հսկողության տակ՝ Ասադն էլ ավելի ամրապնդեց իր և Բաաս կուսակցության դիրքերը Սիրիայում, իսկ վերոհիշյալ կուսակցությունների գործունեության սահմանափակումները նախադրյալներ ստեղծեցին Սիրիայի՝ իրականում միակուսակցական համակարգով պետության վերածվելու համար:

GHARIBJANYAN GEVORG

THE CORRECTION MOVEMENT AND FORMATION OF THE NATIONAL PROGRESSIVE FRONT IN SYRIA

(Summary)

The article deals with the begining of the Correction Movement in Syria on 16th November, 1970, headed by General Hafez al-Asad and formation of The National Progressive Front (NPF).

On President Asad's initiative the Communist Party of Syria, the Arab Socialist Union, the Socialist Unionists and the Arab Socialist Party under the guidence of the Ba'th ruling party on 7th March, 1972 signed an agreement about formation of the National Progressive Front. In the article the author discusses also the consequences of establishing the NPF and it's results on the Syrian domestic policy. As a fact Hafez al-Asad controled all the state organs and instruments of power, though the creation of the NPF was the important initiative to strenghten the internal unity and consolidation. Syria gained stable internal political situation wich was the significant factor for social-economic development.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բաաս (արաբերենից թարգմանաբար վերածնունդ) կուսակցությունը ստեղծվել էր 1947թ. Սիրիայում, իսկ 1952թ. միավորվելով սոցիալիստական կուսակցության հետ, վերանվանվեց Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության:
2. Ասադը դարձել էր Սիրիայի պաշտպանության նախարար 1966թ. և իրեն համարում էր պարտված 1967թ. արաբա-իսրայելյան պատերազմում:
3. Տե՛ս Г. М. Григорян, Позиция Сирии в Ближневосточном конфликте, Ереван, 1989, с. 137.
4. Б. Александров. События в Сирии "За рубежом" 1970, 20-26 ноября, No. 47.
5. Բատրիկ Սիլ. Ալ-Ասադ. Սիրաա ալա աշ-շարկ ալ-առուսատ. էջ 267 (արաբերեն):
6. «ալ-Բաաս», Դամասկոս, 17. 11. 1970:
7. http://assad.org/profile.htm 25.05.0.
8. Современная Сирия (справочник), Москва. 1974, С. 226.
9. Նիդալ հիզբ ալ-բաաս 1943-1980, դիրասա թարիխիյա, թահլիլիյա, մուջազա, Դիմաշկ, 1983, էջ 122 (արաբերեն):
10. Նույն տեղում, էջ 125:
11. Սիրիայի Արաբական Հանրապետությունում Ազգային առաջադիմական ճակատը գործառնում է մինչև այսօր, ավելացել է միայն նրա անդամ կուսակցությունների և կազմակերպությունների քանակը:
12. Атлас Тасс, Еженедельный вестник иностранной информации, 14.03.1972, С. 72.
13. Նիդալ հիզբ ալ-բաաս, էջ 137:
14. Տե՛ս Хартия Прогрессивного национального фронта САР,-Современная Сирия (справочник), Москва, 1974, с. 350-351., ինչպես նաև՝ М. Мисри, М. Мансур, Прогрессивный национальный фронт//Коммунисты и антиимпериалистическое движение. Москва. 1975, С. 22-23.

15. Хартия прогрессивного национального фронта САР,- Современная Сирия (справочник), Москва, 1974, с. 349.
16. Նիդալ հիզբ ալ-բաաս, էջ 137:
17. Տե՛ս Устав Прогрессивного национального фронта САР,-Современная Сирия, с. 354.
18. Նույն տեղում, էջ 352:
19. Moshe Ma'oz, Asad. The Sphinx of Damascus. A political Biography, Weidenfeld and Nicolson, London, 1988.
20. Ասադի իշխանավարության ժամանակ Սիրիայում Բաաս կուսակցության կառավարման շրջանում առաջին անգամ համաժողովրդական փակ գաղտնի ընտրությունների միջոցով ձևավորվեց Ժողովրդական ժողով (պառլամենտ):